# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.02.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**
**թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/17**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 09.02.2018թ. ներկայացված՝ «Մասիսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՄՄՔ-1ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 29.01.2018թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և դրանից հետո կայացված մնացած այլ որոշումները, ինչպես նաև www.gnumner.am կայքում 05.02.2018թ. հրապարակված՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելուն պարտավորեցնելու պահանջի մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2018/17 բողոքն առանց քննության թողնելու մասին «Ֆոտոն» ՍՊԸ-ի 26.02.2018թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

# Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 09.02.2018թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**